ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 08-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Վայք համայնքի ղեկավարի 29 նոյեմբերի 2022 թվականի թիվ 229-Ա որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Վայք քաղաքի 10-003-0047-0054 և 10-003-0047-0055 կադաստրային ծածկագրեով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այգի կորիզավոր հողատեսքով հողամասերը, Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 36/20 հասցեում գտնվող 10-003-0033-0035 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 51/24 հասցեում գտնվող 10-003-0024-0344 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը օտարելու նպատակով հայտարարել աճուրդ. աճուրդի օր նշանակել սույն թվականի փետրվարի 27-ը:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 09-Ա

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 22-ի <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին>>թիվ 633-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ Ոստիկանության քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքային ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 10-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7 ՀԱՍՑԵԻԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԸ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնքի բնակիչ Վահե Նիկալայանին սանիտարական էտում իրականացնելու նպատակով հատել Վայք համայնքի Վայք քաղաքի Երիտասարդական 7 հասցեի հարակից տարածքում գտնվող իր իսկ կողմից տնկված թվով երկու չորացած (ծիրանենի) ծառերը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 53/50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի բնակիչ Մանե Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 53/50 հասցեում գտնվող 66,0 քմ մակերեսով անշարժ գույքը՝ հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների:

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝ միաժամանակ սահմանելով դրանց համապատասխան գործառնական նշանակությունները՝

Վայք համայնք,Վայք քաղաք, Ջերմուկի խճ. 53/50 մակերեսը՝ 30,0 քմ,

Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճ. 53/51 մակերեսը՝ 36,0 քմ,

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 12-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.09.2009 թ-ի թիվ 1066-Ն որոշման 2-րդ կետով , հիմք ընդունելով Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 16.01.2023թ-ի թիվ 2 նիստի դրական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 2 /երկու/ միավոր ֆիզիկական անձ Ստեփան Խաչատրյանի սեփականություն հանդիսացող 0,4 հա /ծածկագիր 10-022-0317-0019/ և 0.26 հա /ծածկագիր 10-022-0317-0018/ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը փոխադրել խոտհարքների, չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 2 նիստի, կայացած 2023թ. հունվարի 16-ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Մ. Մաթևոսյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 2 /երկու/ միավոր քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.4հա /ծածկագիր 10-022-0317-0019/ և 0.26հա /ծածկագիր 10-022-0317-0018/ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը փոխադրել խոտհարքների չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Ա. Գրիգորյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքները իրոք փաստացի խոտհարքներ են, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված տարածքները, որոնք հանդիսանում է քաղաքացու սեփականությունները՝ դասել խոտհարքների շարքին:

Առաջարկվեց Վայք համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Վայք համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 2 /երկու/ միավոր քաղաքացի Ստեփան Խաչատրյանի սեփականություն հանդիսացող 0.4հա / ծածկագիր 10-022-0317-0019 / և 0.26հա /ծածկագիր 10-022-0317-0018/ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը փոխադրել խոտհարքների, չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել՝ համայնքին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 13-Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՄԱԿԻՉ ԱԶԱՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հանգուցյալ Մակիչ Ազատի Մարտիրոսյանին պատկանած Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող հողամասը հասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Պ.Սևակի փողոց, 3 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 14-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Վայք համայնքի ղեկավարի 29 նոյեմբերի 2022 թվականի թիվ 229-Ա որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Զեղեա բնակավայրի 10-023-0307-0023 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այրոտավայր հողատեսքով հողամասը վարձակալության տրամադրելու նպատակով հայտարարել աճուրդ. աճուրդի օր նշանակել սույն թվականի մարտի 7-ը:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 15-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00242 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00242 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք Վայք քաղաք Ս. Շահումյան փողոց, 104/1 հողամաս:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԵՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Սերս բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,02000 հա գյուղ այլ գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր և համայնքային սեփականություն:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 209-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ՝ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Վայք համայնքի ավագանու 15.022022թ. N12-Ն որոշման ընդհանուր դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 37-րդ հոդվածի 1-րդ կետով:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 209-Ա /Վայք համայնքի ղեկավարի 08 հուլիսի 2022 թվականի թիվ 134-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և նոր հանձնաժողով ստեղծելու մասին/ որոշումը:
2. Ստեղծել հանձնաժողով սոցիալապես անապահով բնակիչներից ստացված դրամական, պարենային, կենցաղային օգնության դիմումների քննարկման և դրամական օգնության չափը որոշելու նպատակով, հետևյալ կազմով՝

- Հանձնաժողովի նախագահ - Մխիթար Մաթևոսյան- համայնքի ղեկավար
- Հանձնաժողովի քարտուղար -Նորայր Հովակիմյան- աշխատակազմի զարգ. ծրագրերի, սոց. աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ
- Հանձնաժողովի անդամ -Եվա Մարտինի Ջանոյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
- Հանձնաժողովի անդամ - Անուշ Նիկոլայի Ղազարյան-համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

- Հանձնաժողովի անդամ - Նինել Ռաֆիկի Մկրտչյան - համայնքի ղեկավարի խորհրդական
- Հանձնաժողովի անդամ - Հովսեփ Զաքարյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /իրավաբան/
- Հանձնաժողովի անդամ -Արամ Հովսեփյան -համայնքապետարանի ֆին. եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
- Հանձնաժողովի անդամ - Արտաշես Էդիկի Մանուկյան-համայնքապետարանի ֆին. եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ
- Հանձնաժողովի անդամ -Մայիս Սաղաթելյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
- Հանձնաժողովի անդամ - Սուսաննա Կոստանյան - համայնքի ավագանու անդամ
- Հանձնաժողովի անդամ - Շուշանիկ Ասլանյան-համայնքի ավագանու անդամ

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ